# Թերթիկ 1

Բարձրաձայն կարդացեք հետևյալ իրավիճակը.

Ձեր ընկերներից մեկն ուսուցանվում է լիաժամկետ միսիոներների կողմից: Նա մոտենում է ձեզ և ասում. «Վերջին դասի ժամանակ միսիոներներն ինձ հրավիրեցին մկրտվել: Ես հավատում եմ Հիսուս Քրիստոսին և ընդունում եմ այն ամենն, ինչ միսիոներներն ուսուցանում են ինձ: Բայց ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ պետք է մկրտվեմ, քանի որ երեխա ժամանակ ես արդեն մեր եկեղեցում մկրտվել եմ»:

Ձեր զուգընկերոջ հետ քննարկեք, թե ինչպես կպատասխանեիք այդ ընկերոջը՝ օգտվելով Մատթեոսի 3.13–17 հատվածներից: Պատրաստ եղեք կիսվելու ձեր պատասխանով: (Կարդացեք նաև Վարդապետություն և Ուխտերի 22 գլուխը, որպեսզի իմանաք, թե ինչպես Տերը պատասխանեց այն մի քանիսին, ովքեր Վերականգնման վաղ օրերում արտահայտեցին նույն մտահոգությունը:)

# Թերթիկ 2

Բարձրաձայն կարդացեք հետևյալ իրավիճակը.

Դուք և ձեր քրիստոնյա ընկերներից մեկը կրոնական քննարկում եք ունենում: Նա ձեզ ասում է. «Ես հավատում եմ, որ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մեկ անձնավորություն են: Դուք ա՞յլ բանի եք հավատում: Եթե այո, ապա ինչո՞ւ:

Քննարկեք, թե ինչպես կպատասխանեիք այդ ընկերոջը՝ օգտվելով Մատթեոսի 3.13–17 հատվածներից: Պատրաստ եղեք կիսվելու ձեր պատասխանով: (Մատթեոս 3-ի պատմությանը զուգընթաց կարող եք օգտվել Հովհաննես 17.20–22-ից: Այս հատվածներում գրված է, որ Հիսուսն աղոթեց Հորը, որ Իր բոլոր հետևորդները մեկ լինեն, ինչպես Նա և Հայրն են մեկ [միասնական նպատակով]: Հիսուսը նկատի չուներ, որ Քրիստոսի բոլոր աշակերտները դառնան մեկ էակ:)



© 2015 BY Intellectual Reserve, Inc. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԵՆ: